2126.11/465

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
Տ. ՍԻՄՈՆՅԱՆ
«01» 02 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0025-21

Ձեռնարկողը՝ ***«ԿԱՄ Դեվելոփմենթս» ՍՊԸ***
Ք. Երևան, Միկոյան 18/2

Գործունեությունը՝ ***Նոր-Նորք վարչական շրջան, Ա. Միկոյան փողոց 18 և 18/1 հասցեներում նախատեսվող արտադրական նշանակության շինությունների վերակառուցման, պահեստային շինությունների և պարսպի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0025-21

< 01 > 02 2021թ.

Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջան, Ա. Միկոյան փողոց 18 և 18/1 հասցեներում նախատեսվող արտադրական նշանակության շինությունների վերակառուցման, պահեստային շինությունների և պարսպի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «ԿԱՄ դեվելոփմենթս» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Նոր-Նորք վարչական շրջան

«ԿԱՄ դեվելոփմենթս» ՍՊԸ կողմից ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսվում է Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի, Ա. Միկոյան փողոց 18 և 18/1 հասցեներում՝ արտադրական նշանակության շինությունների վերակառուցում, պահեստային շինությունների և պարսպի կառուցում (կառուցապատող՝ «Երևանի բեռնատար ավտոտրանսպորտային թիվ 1» ԲԲԸ):

Գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2019թ. մարտի 21-ի N01/18-07/1-Գ-1309-180 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.93381հա, 1.1062հա և 1.16657հա մակերեսով հողամասերում, որոնց նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական է, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների է:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող արտադրական նշանակության շինությունների վերակառուցման, պահեստային շինությունների և պարսպի կառուցման տարածքը գտնվում է Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի, Ա.Միկոյան փողոց 18 և 18/1 հասցեներում: Գործունեության նպատակն է կառուցել սանիտարական կերամիկայի համար պահեստային շինություններ:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքն իրենից ներկայացնում է Երևան քաղաքի արևելյան եզրամասի հրաբխային բարձրավանդակի փոքրաթեք դելյուվիալ լանջի մի հատված՝ հյուսիսից դեպի հարավ անկումով, որը քաղաքաշինական կառուցապատման հետևանքով ենթարկվել է փոփոխման : Հետազոտվող տեղամասի ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1331-1338մ սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական ժամանակաշրջանի, էոպլեյստոցեն դարակարգի հրաբխային հոսքերը՝ տուֆերն ու տուֆաբազալտները, որոնց ծածկում են ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ և ժամանակակից տեխնածին առաջացումները:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- ընդհանուր տարածքի մակերեսը կազմում է՝ 42065.8 քմ,
- կառուցապատման մակերեսը՝ 15869 քմ;
- կանաչապատման մակերեսը՝ 17122 քմ;
- անջրանցիկ մակերես՝ 9074.8 քմ:

Համաձայն անշարժ գույքի սեփականության N1012014-01-0080 վկայականի տարածքում առկա է յուղման արտադրամաս 1002.66 քմ մակերեսով, իսկ N17012014-01-0111 վկայականի՝ արտադրամաս – 3826.07քմ, ջրավազան 318.27քմ, ծածկ 356.14քմ, հարթակ 19.84քմ, որոնց մի մասը քանդվելու մի մասն էլ վերակառուցվելու են: Մոտակա բնակելի հասարակական շենք շինություններից նախատեսվող պահեստային տարածքները գտնվում են 5.9-50մ հեռավորության վրա:

Գլխավոր հատակագծով նախատեսվում է 14178.75քմ մակերեսով երկու պահակատուն, պահեստային մասնաշենքեր և ավտոկայանատեղի: Վերակառկուցվող արտադրական մասնաշենքում նախատեսված են կենցաղային սպասարկման տարածքներ: Կառուցվող պահեստները մեկ հարկանի են, որոնք ունեն սահնանգույցներ: Տանիքները երկլանջ և միալանջ են, նախատեսվում է կազմակերպել ներքին և արտաքին ջրահեռացում: Տարածքը սպասարկում են գոյություն ունեցող չորս մուտքեր, որոնց ավտոտրանսպորտի մոտեցումներն ապահովում են Արտ. Մկոյան և Գալշոյան փողոցների միջոցով: Տարածքը մասնակի կառուցապատված է, բուսահողը բացակայում է:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար, բնակելի շենքերում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Համաձայն գնահատման հայտի տարածքում բնության հատուկ պահպանվող տարածքներ կամ պատմամշակութային հուշարձաններ չկան:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Էլեկտրամատակարարումն իրականացվելու է «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն, շահագործման ընթացքում ջերմամատակարարումը կիրականացվի անհատական էլեկտրական սարքերով:

Պահեստային տարածքների ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, ջրամատակարարումը կիրականացվի Միկոյան փողոցի 18 և 18/1 տարածքների դիմացով անցնող D=500մմ ջրագծից, կոյուղագիծը՝ Միկոյան փողոցի 18 և 18/1 տարածքների դիմացով անցնող D=600մմ կոյուղագծից, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Տարածքում գազաֆիկացում չի նախատեսվում:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ շինարարական աշխատանքները տևելու են 18 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կռունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՐԿԱՐԱՆ "ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT EXPERT CENTER" SNCO ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՐԿԱՐԱՆ ՀՊՄԿ * RA YEREVAN ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՐԿԱՐԱՆ ՀՊՄԿ * RA YEREVAN ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Շինարարական հրապարակի մակերեսը կազմելու է 500մ², որտեղ պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու են շինարարության համար նախատեսվող համապատասխան շինտեխնիկան, ժամանակավոր շինությունները և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (35 մարդ) և կազմում է 448.2 խմ/շին. ժամ: 500մ² ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 405մ³/շին.ժամ: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 853.2մ³/շին.ժամ: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդվելու են պարզարան (25մ³), որտեղ կատարվելու է մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, իսկ խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Բնակելի համալիրի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 19615մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 13730մ³ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ 5885խմ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք: Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում՝ կենցաղային (3150 կգ) և շինարարական (400մ3) աղբն է: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի մոտակա աղբավայր՝ Երևան քաղաքը սպասարկող օպերատորի կողմից:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 17122մ²: Քանի որ, ըստ գնահատման հայտի շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է, նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Ըստ կանաչապատման նախագծի նախատեսված է տարածքում տնկել հետևյալ ծառատեսակները՝ թխկի – 10 հատ, գնդաձև իլենի – 20հատ, գնդաձև սամշիտ – 12հատ, կատալպա – 20հատ, ձիակասկ – 22 հատ, սյունաձև թույա – 18 հատ, փռվող գիհի – 8 հատ, ասպիրակ – 18հատ, ֆոռզիցիա – 10հատ:

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Ոռոգումն իրականացվելու է տարածքի հարևանությամբ գոյություն ունեցող ոռոգման ցանցից:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Նախնական գնահատման հայտի համաձայն նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում օրական 2-3 անգամ,
- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ,
- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,
- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև ապահովել դրանց տեխնիկական նորմալ վիճակի շահագործումը,
- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տեսակավորում,
- տնկած ծառերի և խոտածածկի խնամք և մոնիթորինգ,
- մթնոլորտային օդի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- շինարարության ընթացքում աշխատանքի և արտակարգ իրավիճակների անվտանգության նորմերի և կանոնների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար, ամբողջ շինարարության ընթացքում նախատեսվելու է հատկացնել 1250000 հազ. դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն նախնական հայտի նախատեսվող արտադրական նշանակության շինությունների վերակառուցումը, պահեստային շինությունները և պարիսպը կառուցվելու և շահագործվելու են ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, պաշտպանության նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանը, շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը և պահանջները:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԿԱՄ դեվելոփմենթս» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի, Ա. Միկոյան փողոց 18 և 18/1 հասցեներում նախատեսվող արտադրական նշանակության շինությունների վերակառուցման, պահեստային շինությունների և պարսպի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Յու. Մատինյան